ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Օ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ստեփաննոս Օրբելյանի երկում[1] բերված են Վայոց ձոր գավառում XIII դարում գոյություն ունեցած բազմաթիվ բնակավայրերի անուններ, որոնց զգալի մասի տեղադրությունը անցյալում պարզել են Ղ. Ալիշանը[2], Քաջբերունին[3], Ե. Լալայանը[4], Ս. Բարխուդարյանը[5] և ուրիշներ։ Սակայն մինչև օրս այդ բնակավայրերից շատերի տեղադրությունը դեռ չի ճշտված։

Ելնելով մատենագրական նյութերի, վիմագրերի և այլ աղբյուրների ընձեռած տվյալներից, ինչպես նաև տարեց տեղացիների հաղորդած տեղեկություններից, ստորև փորձում ենք ճշտել Վայոց ձորի մի շարք պատմական բնակավայրերի տեղադրությունը։

1. Մոխրոց — Օրբելյանի ցուցակի № 15 գյուղը, պահպանել է ադրբեջանական թարգմանությամբ իր նախկին անունը (Քյոմուռլու)։ Չնայած Ղ. Ալիշանը Քյոմուռլուն թարգմանել է Ածղուտ («Սիսական», էջ 169), սակայն այդ անունը մատենագրական տվյալներով չի հաստատվում։ Վայրը գտնվում է Ելփին գյուղից 8 կմ հարավ-արևմուտք։

2. Հացիկ — նույն ցուցակի № 56 գյուղը. գտնվել է Վարդենիք (Վարթանես) գյուղի մոտ և համընկնում է Հեշին գյուղատեղին։ Հացիկը գտնվում է Ելփին գյուղից մոտ 3 կմ արևելք։

3. Դրունք — ցուցակի № 79 գյուղը, գտնվել է Խնձորուտ գյուղից մեկ կմ արևելք և համընկնում է Գյանալի գյուղատեղի վայրին։

4. Նորիք — № 58 գյուղը, Օրբելյանի նկարագրության համաձայն պետք է որ գտնված լիներ Արենի գյուղի ԳԷՍ-ի, ջրաղացի և հնագույն կամրջի ավերակների մոտ («գնեցաք... հոգեցատուր այգի մի ի կամրջայ խելիս և այլ բազում հայրենիս հողս և տունս. շինեալ էին և երկու ակն ջրաղացս աջ կամրջին, և այս ամենայն հալալ... ժառանգութիւն... Նորավանից», Օրբելյան, էջ 491)։ Ալիշանը վայրը ավելի ճշտելով, գրում է. «...ի սպառուած ձորահովիտին էլբինայ առ եզեր Արփայի յաջմէն, կան աւերակ գեօղատեղիք որպեսն ինձ անծանոթ...» («Սիսական», էջ 169)։ Այս վայրն այժմ կոչվում է «բոզբաղլար», որտեղ հողի տակից հաճախ դուրս են գալիս խեցեղենի բեկորներ։ Լալայանը Նորիքը տեղադրել է Ենգիջա գյուղի տեղում («Ազգ. հանդես»,

---

1 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեանի, արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1911։

2 Ղ ե ո ն դ Ա լ ի շ ա ն, Սիսական. Վենետիկ, 1893։

3 Տե՛ս «Արարատ», 1888, 1889. 1891։ «Փորձ», № 3—4, 1877—1878։

4 Տե՛ս «Ազգագրական հանդես», 1904. 1905։

5 Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Դիվան հայ վիմագրության, պրակ III. Վայոց Ձոր. Երևան, 1967։

1904, № 12, էջ 292), սակայն Ենգիջա գյուղը նախկինում կոչվել է Գնչին, որը վկայում է Քաջբերունին («Արարատ», 1891, էջ 40)։

5. **Ըռնեղի** — ցուցակի № 87 գյուղի մասին Լալայանը գրում է. «Այդ գյուղատեղը գտնվում է Ղոզուլջա ջրերի ակունքներում, «Ոլղյուր» անունով, որտեղ կան հին եկեղեցու հիմնապատեր, որն անվանել են Սբ Ստեփաննոս. կառուցել են 1292 թ., երկու եղբայրներ։ Այստեղից մեկ վերստ դեպի արևելք, փոքր հարթակի վրա կանգնած է կիսավեր մի եկեղեցի և XIII ու XIV դարերի խաչքարեր, գյուղատեղին անվանում են «վանքի դուզ» («Ազգ. հանդես», 1904, № 12, էջ 281)։ Վկայում են նաև Ալիշանը (էջ 167), Շոպենը («Исторические памятники Армянской области»)։ Սա այժմյան Ռինդ գյուղի նախորդն է եղել։

6. **Սար**— Ամաղուի Նորավանքի հյուրատանը նվիրված գյուղն է, որի մասին վիմագրում ասված է՝ «Չլճաղունն Սարի» («Դիվան», III պրակ, էջ 246 և ցանկ, 423)։ Նվիրատուն եղել է Օրբելյան տոհմից Սարգիս եպիսկոպոսը։ Շատ հավանական է, որ այս գյուղը գտնվել է Աղավնաձոր գյուղի արևմտյան կողմում գտնվող «Բաղչաչղ» կոչված երբեմնի լճափնյա ավերակների տեղում։

7. **Եղեգնաձոր**—Օրբելյանի ցուցակի № 31-ում նշված այս գյուղի անունը, որոշ աղճատումներով, մնացել է գրեթե անփոփոխ և այժմ կոչվում է Աղավնաձոր։ Սա Վայոց ձորի միայն 3 գյուղերից մեկն է եղել հին հայ բնակիչներով (մյուս երկուսն են Խաչիկ և Արփա գյուղերը)։

Ալիշանը անվանել է Եղեգնաձոր («Սիսական», էջ 168), Նորավանքի վիմագրում՝ Եղեգնաձոր («Դիվան», III պրակ, էջ 212 և 218), Պետական պատմական արխիվի (ֆ. 65—1—469, թ. 18) վավերագրում՝ Егекнадзор, Վերին Նորավանքին նվիրված գյուղերի ցուցակի մեջ (1302 թ.)՝ Եղեգնաձոր։

8. **Քարկոփեալ** — 1298 թ. Ամաղուի Նորավանքին նվիրված այս գյուղի ավերակները գտնվում են Խաչիկ գյուղի Քարկոփի վանքից հյուսիս-արևելք գտնվող «Պորտավոր խաչ» կոչված վայրում։ Քալատակ անունով գյուղը գոյատևել է մինչև 1835 թ. (տե՛ս նույն արխիվի ֆ. 65—1—469, թ. 280։ Նաև՝ «Դիվան», III պրակ, էջ 216։ «Արարատ», 1889, էջ 465)։

9. **Մսեն** — Օրբելյանի ցուցակի № 29 գյուղը, ըստ ցուցակաշարքի հերթականության, հավանաբար գտնվել է Ազարակաձոր և Էրթիչ գյուղերի մոտ, Մոզրով գյուղի ավերակների վայրում, որտեղ Քաջբերունու վկայությամբ եղել է հայկական հին գյուղ («Փորձ», 1877—1878, № 3—4, էջ 341։ Նույնը, էջ 517։ «Ազգ. հանդես», 1904, էջ 259)։ Գտնվել է Էրթիչ գյուղատեղից 4—5 կմ հարավ-արևելք, մի ձորակի մեջ։

10. **Խորձա** — նույն ցուցակի № 23 գյուղի անունը աղավաղվել, դարձել է Շորջա։ Սրա մասին Օրբելյանը գրում է. «...Տեր Գրիգոր եպիսկոպոս մեռանի ի Վայոց ձոր ի Խարձա գիւղ» (էջ 342)։ Վայրը գտնվում է Գնչին (Ենգիջա) և Էրթիչ գյուղերի մերձակայքում։

11. **Ըրվեմ** — նույն ցուցակի № 22 գյուղը, գտնվելով Խորձա գյուղատեղի մոտ, հավանաբար եղել է Շորջայից հարավ-արևելք գտնվող Ղուրբան Քյասլան գյուղատեղում, որի մասին Լալայանը գրում է. «Այստեղ բլրակի վրա կա եկեղեցու ավերակ» («Ազգ. հանդես», 1905, էջ 292)։

12. **Կուրամ** — Օրբելյանի ցուցակի № 33 գյուղը գտնվել է Աղքենդ գյուղի մոտի ավերակներում, որտեղ Ե. Լալայանի վկայությամբ կա հայկական հին

և ընդարձակ գերեզմանատուն («Ազգ. հանդես», 1905, էջ 276)։ Վայոց Ձորի հնությունները ուսումնասիրողները Աղբենդ գյուղին թյուրիմացաբար տվել են Ախտարոյին, Աղնջաձոր, Դրունք, անգամ Լեռնանցք անունները՝ առանց հիմնավորելու։

13. Դեզպանարտ — գյուղի մասին Օրբելյանը գրում է. «...անցեալ ընդ գեղամ մտին ի Վայոց ձոր... և զտեղի առին կառքն ի հարթ տեղւոջ մի ի ձորին Սուլեմայ, որ դեզպանարդ կոչի» (էջ 264—265)։ Այս գյուղի տեղի մասին Ալիշանի մոտ ասված է. «...զտեղի առին կառքն ի հարթ տեղւոյջ մի ի ձորին Սուլեմայ, որ Դեզպանարտ կոչի... ընդ մեջ սորա թառաթուն գեղջ» («Միսական», էջ 163)։ Այս նկարագրության համաձայն, Դեզպանարտը համընկնում է Թարաթում գյուղի տեղին։

14. Վախցան — Շատիվանքի 1270 թ. վիմագրում («Դիվան», III պրակ, էջ 156) և 1302 թ. մի ձեռագրում («ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Է. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 7) հիշվող այս գյուղը, Լալայանի տվյալներով գտնվել է Հորս գյուղի Վախսե կոչված անտառում («Ազգ. հանդես», 1905, էջ 279)։ Քաջբերունին ավելի ճշտելով, գրում է. «Վախցանը գտնվել է Սալլի գյուղի արևմտյան կողմում գտնվող մի ձորակի միջի ավերակներում» («Փորձ», 1879, № 1, էջ 103)։ Ալիշանը ավելացնում է. «Կեռ փարսաղ դեպի աջակողմը Սուլեմա գետակից Վախսե անուն, հետո Հորբ» («Միսական», էջ 161)։

15. Արկադուկերտ—նույն ցուցակի № 60 գյուղը ցուցակի հերթականության համաձայն հավանաբար գտնվել է Հորվաղդ գյուղից հյուսիս, Բախչաջղ կոչվող վայրի ավերակներում։ Շոպենի ավերակ գյուղերի ցուցակում կոչվել է Մուղանջղ (էջ 517)։ Ս. Բարխուդարյանը գրում է. «Սրա արևմտյան եզրին, գետակի ձախ ափին Բաղչաջուղ կոչված ավերակ գյուղատեղում կանգնած է 1291 թ. մի խաչքար» («Դիվան», III պրակ, էջ 165, № 505)։ Այստեղ Ե. Լալայանը տեսել է բնակավայրի և ձիթհանի ավերակներ («Ազգ. հանդես», 1904, էջ 276)։

16. Փրակայ—ցուցակի № 63 գյուղը հավանաբար գտնվել է Հորվաղդ գյուղի տեղում, չնայած որ Ալիշանը թյուրիմացաբար այստեղ տեղադրել է ցուցակի № 21՝ Կորոտույր գյուղը («Միսական», էջ 157), իսկ Քաջբերունին Կորոտույրը տեղադրել է Գորադիզ գյուղի տեղում։ Հորվաղդ գյուղում՝ թե՛ Լալայանի և թե՛ Քաջբերունու վկայությամբ կան հայկական երկու հին գերեզմանատներ («Ազգ. հանդես», 1904, էջ 276։ «Արարատ», 1889, էջ 297)։

17. Աղնջարեղ — ցուցակի № 82 գյուղը պետք է լիներ Գյուլիդուզ գյուղի հարավային ձորակում գտնվող Ջանիզարախլու գյուղատեղում, Ղարախլու գետակի ձախ ափին, որտեղ Լալայանը և Քաջբերունին տեսել են Ջանի իշխանի ամրոցի, եկեղեցու և բնակավայրի ավերակներ («Ազգ. հանդես», 1905, էջ 272։ «Արարատ», 1888, էջ 444)։

18. Շատախ միւս — Օրբելյանի ցուցակի № 84 գյուղը իր ընդարձակ հայկական գերեզմանոցով համապատասխանում է Ջանի գյուղի տեղին, որը գտնվում է Գյուլիդուզ գյուղից 2 կմ դեպի հյուսիս («Արարատ», 1888, էջ 775)։

19. Կուրեն — գյուղի մասին հիշատակություն կա Վերնաշենի Սպիտակավոր վանքի 1330 թ. արձանագրությունում («Դիվան», III պրակ, էջ 111, 422)։ Հավանաբար գտնվել է Վերնաշեն գյուղից հյուսիս-արևելք, դեպի վանք տա-

նող արահետի մոտակա ավերակներում, որտեղ Քաջբերունու վկայությամբ կային բնակարանների, եկեղեցու և ձիթհանի ավերակներ («Արարատ», 1889. էջ 53)։

20. Խոտորալեզ — Օրբելյանի երկի 72-րդ էջում Վերնաշենի Սպիտակավոր վանքի՝ Պողոյան էաչոյի որդի Ամիր Հասանի կտակագրում («Դիվան», III պրակ, էջ 97) հիշվող այս գյուղի մասին ասված է. «...կաթողիկոս Գիտ և Անանիա Սիւնեաց եպիսկոպոս և բազմամբոխ ժողովով փոխեն ի հանգիստ գսուրբս.. բայց այժմ յետ աւերման տեղւոյն եղև և շինանիստ կեղջկաց, և կոչեցաւ տեղին Խոտորալեզ»։

Այժմ այդ վայրը անվանում են «Քյոշք» (գտնվում է Եղեգնաձոր ավանում)։

Հ. Եղիազարյանը («Ակիդրեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները», 1955, էջ 45) Խոտորալեզը տեղադրել է այս վայրում։ Լալայանը Խոտորալեզ և Փոնձաթաղ գյուղերը նույնացրել է («Ազգ. հանդես», 1905, էջ 271), իսկ Ս. Բարխուդարյանը նույնացրել է Սխտորալեզին («Դիվան», III պրակ, էջ 104)։

21. Փոնձաթաղ — գյուղի անունը հիշվում է 1498 թ. այստեղ գրված մի ձեռագրի հիշատակարանում և Սպիտակավոր վանքի 1348 թ. վիմագրում («ԺԵ դարի հայ. ձեռ. հիշ.», մաս Դ, Երևան, 1967, էջ 258։ «Դիվան», III պրակ, էջ 81)։ Վերջինում ասված է. «... Ես Պենա, որդի Սմբատա, թոռն Լիպարիտի տեր Փոնձաթաղին»։ Օրթաբենդ (այժմ՝ Գլաձոր) գյուղի արևմտյան բլուրի վրա գտնվող խաչքարի 1311 թ. արձանագրությունում ասված է. «Իշխանութի Պարոն Զեսարին... Ես վարդալար կանգնեցի զխաչս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոյ...» («Դիվան», III պրակ, էջ 102)։ Զեսար Օրբելյանը, որի դարպասը գտնվել է Հորս գյուղում («Դիվան», III պրակ, էջ 166), Սելիմի քարավանատունը կառուցել տվողն է եղել «...յազգէ Աւրպելենց», ինչպես ասված է վիմագրում («Դիվան», III պրակ, էջ 177)։ Օրբելյանների այս ճյուղի կալվածքները տարածվելիս են եղել Սելիմի ձորահովտով, Եղեգիս գետակի ձախափնյա լանջերով և հասել են Օրթաբենդ գյուղի արևմտյան սահմանում գտնվող «Վարդանի բերդ» կոչվող բլուրին, որտեղ Լալայանի և Քաջբերունու վկայությամբ գտնվել են նախկին գյուղի ավերակները («Ազգ. հանդես», 1905, էջ 271։ «Արարատ», 1889, էջ 48)։ Հավանաբար հենց այստեղ է գտնվել Փոնձաթաղը։

22. Սխտորալեզ — գյուղի մասին հիշատակություններ կան Թանատի («Դիվան», III պրակ, էջ 82) և Սպիտակավոր («Դիվան», III պրակ, էջ 101) վանքերի արձանագրություններում։ Թանատի վանքի 1353 թ. վիմագրում ասված է. «... տվիք զմեր գնած իգին և Սխտորալեզ...», իսկ Սպիտակավոր վանքի 1351 թ. արձանագրությունում՝ «...Նորոդեցի զվախմսի Սխտորալեզ զգեղի գլխին... այգին»։ Հավանաբար այս գյուղը գտնվել է Եղեգնաձոր ավանից հարավ-արևելք, «Աղուռու-չայ» գետակի ձախափնյա հարթակի ավերակներում, որտեղ Լալայանի վկայությամբ եղել են գյուղի ավերակներ՝ երկու մատուռներով և պատվանդանին կանգնած խաչքար («Ազգ. հանդես», 1905, էջ 276)։ Խաչքարի վրա գրված է. «Կանգնեցի խաչս Պողոյ եւ զավակներին» («Դիվան», III պրակ, էջ 104)։

23. Սրիժո — Օրբելյանի ցուցակի № 67 գյուղը հավանաբար եղել է Երեքունք և Ագարակ (Մալիշկա) գյուղերի միջև գտնվող հորդ աղբյուրների մոտ

ընկած «Նովլար» վայրում, որտեղ, ըստ Լալայանի, եղել է հայկական հին գյուղատեղ («Ազգ. հանդես», 1905, էջ 268)։

24. Զակոռ գյուղի մասին հիշատակություն կա Հերհեր գյուղի Սիոն եկեղեցու 1259 թ. արձանագրության մեջ («Դիվան», III պրակ, էջ 51), որտեղ ասված է. «...ես տեր Ստեփանոս Սիւնեաց արհեպիսկոպոս տվաք զմեր հերենի գեղն Զակող ի վանիսն սբ ուխտիս...»։ Այս գյուղը հավանաբար գտնվել է այժմյան Կարմրաշեն գյուղի տեղում, որտեղ, ըստ Քաջբերունու, եղել են եկեղեցու և հայկական գերեզմանատան ավերակներ («Արարատ», 1889, էջ 283)։

25. Համամատես — գյուղի մասին հիշատակություն կա Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ («Դիվան», III պրակ, էջ 56, № 148)։ Հավանաբար գտնվել է Գյոռաբաս գյուղատեղում, որի մասին Քաջբերունին գրում է. «Այստեղ կան բազմաթիվ խաչքարեր մինչև 1602 թվականին հասնող և 10×8² քայլ մեծության կիսավեր եկեղեցի («Արարատ», 1889, էջ 281)։ Գյոռաբասում Ալիշանը տեղադրել է Օրբելյանի ցուցակի Խոզաւաս գյուղը, որի մասին գրում է. «... եւ ոչ գտանի մերձաձայն հին անուանց ցուցակին բայց եթե Խոզաւասն» («Սիսական», էջ 110)։ Մեր կարծիքով սա ճիշտ չէ։

26. Կավարտի — Ս. Աստվածածին եկեղեցու մի այլ արձանագրության մեջ («Դիվան», III պրակ, էջ 52, № 136) այս գյուղի մասին ասված է. «...ես կուկոր Մամայս, զկուարտին հողն տվաք ի սուրբ ուխտս...»։ Քաջբերունին գրում է. «...Կավարտի գյուղի տեղը անհայտ է» («Արարատ», 1889, էջ 326)։ Հավանական է այս գյուղը տեղադրել Կարմրաշենից հյուսիս, Զաբախլու և Հերհեր գետակների միջև գտնվող Գենդարա գյուղատեղում։

27. Զամարաթաղ — գյուղը, որ հիշատակվում է նույն եկեղեցու արձանագրության մեջ («Դիվան», III պրակ, էջ 50, № 135), հավանաբար գտնվել է «Հին Քյոթանլի» կոչված վայրի մոտակա ավերակ գյուղերից մեկի տեղում, որոնց մասին Ս. Բարխուդարյանը գրում է. «Կարմրաշեն գյուղի շրջակայքում... նախկինում և մինչև վերջերս էլ տեղավորված էին մի քանի մանր գյուղեր» («Դիվան», III պրակ, էջ 41)։

28. Այրերենեցէ — գյուղի անունը հանդիպում է XIV և XV դարերի երկու ձեռագրերի հիշատակարաններում («Մենք ի վերին յարևելէ ի գավառին Վայոց ձորէ ի բնիկ գեղջէ Այրերենեցէ ի վանք Նորա մեզ սնեալ է...», «... ես անպիտան ծառայս Աստուծո Աւան-Այրերուաց ծեռաւոր...» («ԺԵ դարի հայ. ձեռ. հիշ.», Գ մաս, էջ 252 և «ԺԴ դարի հայ. ձեռ. հիշ.», էջ 347, № 434—81 բ)։

Ելնելով Այրերենեց արմատից, այս գյուղը հնարավոր է տեղադրել Մարտիրոս գյուղի ժայռափոր եկեղեցու դիմաց, գետի ձախ ափին գտնվող փոքրիկ բլրակի վրայի մեծ գերեզմանատան շուրջը գտնվող ավերակներում (տե՛ս նաև «Դիվան», III պրակ, էջ 178)։

29. Խոզավաս — Օրբելյանի ցուցակի № 47 գյուղը, ցուցակի № 48՝ Լիճ հանրահայտ գյուղի մոտ, որը իրականում կա, հավանաբար գտնվել է Լիճ գյուղի հարևան Մարտիրոս գյուղի հարավային կողմում ընկած «Լվիս» կամ «Աշուղի չայիրներ» կոչված հին գյուղատեղում, որտեղ Քաջբերունին հայտնաբերել է հին գյուղի ավերակներ։

30. Ակռոց գետ — նույն ցուցակի № 3 գյուղը, հավանական է տեղադրել ցուցակի № 4՝ Մարտիրոս գյուղից արևելք ընկած ավերակներում, որ հայտնաբերել է նույն Քաջբերունին («Արարատ», 1891, էջ 108)։

О МЕСТОПОЛОЖЕНИИ НЕКОТОРЫХ ИСТОРИЧЕСКИХ СЕЛ ВАНОЦ-ДЗОРА

А. О. ХАЧАТРЯН

(Резюме)

В труде армянского историка XIII в. Степаноса Орбеляна «Պատմութիւն նահանգին Սիսական» приведен список 145 сел гавара (уезда) Ваноц-Дзор (ныне Ехегнадзорский и Азизбековский районы Армянской ССР). Местоположение многих из этих сел до настоящего времени не выяснено.

На основании эпиграфических данных, свидетельств средневековых армянских историков, путешественников, изучавших указанный район в XIX в., а также сообщений местных старожилов в сообщении уточняется местоположение 30 сел из списка Орбеляна.